

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ
ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Պատկերվող օբյեկտների տեղադրումը թղթի կամ կտավի մակերեսին դա՛

- 1) միայն երկչափ մակերեսի կազմակերպում է
- 2) միայն եռաչափ մակերեսի կազմակերպում է
- 3) եռաչափ և երկչափ տարածության կազմակերպում է
- 4) հարթ մակերեսի կազմակերպում է

2 Ընտրեք տեղադրման ճիշտ տարբերակները.



- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

3 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է ենթադրում էլեմենտների կրկնությամբ տեսողական հաջորդականություն ստեղծելը.

- 1) սիմետրիկ
- 2) ստատիկ
- 3) ռիթմիկ
- 4) դոմինանտ

4 Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է սիմետրիկ.



1.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



2.



3.



4.

5 Ի՞նչ է իրենից ներկայացնում «կոնտրաստը» կոմպոզիցիայում.

- 1) գունային կրկնություններով ներդաշնակության ստեղծում
- 2) կոմպոզիցիոն տարրերի համաչափ բաշխում
- 3) որևէ էլեմենտի շուրջ կոմպոզիցիայի կենտրոնացում
- 4) էլեմենտների տարբերությունն՝ ըստ ձևի, չափսի, երանգի և գույնի

6 Ո՞ր ձևակերպումն է բնութագրում «կոմպոզիցիա» եզրույթը.

- 1) հնուց հայտնի գեղանկարչության տեսակ
- 2) էլեմենտների տեսողական կազմակերպումը տարածության մեջ
- 3) գունաբաշխման սկզբունք
- 4) լինդեումի վրա փորագրություն

7 Ի՞նչ է «ոսկե հատումը» կոմպոզիցիայում.

- 1) ստեղծագործության գունապնակ
- 2) կոմպոզիցիոն մակերեսի ձև
- 3) համաչափություն, որը համարվում է գեղագիտորեն կատարյալ և հարմոնիկ
- 4) հավասարակշռության կենտրոն

8 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է բնութթով հակադարձ դինամիկ կոմպոզիցիային.

- 1) ստատիկ
- 2) ասիմետրիկ
- 3) ռիթմիկ
- 4) դոմինանտ

9

Նշվածներից ո՞րը չի համարվում գեղարվեստական տպագրության ձև.

- 1) լինոփորագրություն
- 2) օֆորտ
- 3) խճանկար
- 4) վիմագրություն

10

Կոմպոզիցիայում ի՞նչն է կոչվում «դոմինանտ».

- 1) կոմպոզիցիայի երկրաչափական կենտրոնը
- 2) առանցքը որի նկատմամբ դասավորված են էլեմենտները
- 3) շարժման բացակայությունը կոմպոզիցիայում
- 4) էլեմենտ, որը գերակա է մնացածի նկատմամբ

11

Միմյանց հակադարձ եզրույթների գույգերից, ո՞րն է սխալ.

- 1) ռիթմիկ և դինամիկ
- 2) սիմետրիկ և ասիմետրիկ
- 3) ախրոմատիկ և խրոմատիկ
- 4) դինամիկ և ստատիկ

12

Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է ստատիկ.



1.



2.



3.



4.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

13

Տրված գունային եռյակներից ընտրեք տաք գույների խումբը.

- 1) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 2) կարմիր, նարնջագույն, դեղին
- 3) կարմիր, կապույտ, մանուշակագույն
- 4) կապույտ, կանաչ, փիրուզագույն

14

Տրված գույներից ո՞րն է ասոցացվում երջանկության, լավատեսության ու ջերմության հետ.

- 1) երկնագույն
- 2) մանուշակագույն
- 3) մոխրագույն
- 4) դեղին

15

Ո՞ր գույներն են համարվում մոնոխրոմ.

- 1) գունային շրջանի երեք միմյանց կից գույները
- 2) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները
- 3) գունային շրջանի միմյանցից հավասարահեռ երեք գույների խումբը
- 4) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները

16

Ո՞ր գույնն է ստացվում կապույտի և դեղինի խառնուրդից.

- 1) կարմիր
- 2) երկնագույն
- 3) կանաչ
- 4) նարնջագույն

17

Ո՞ր գույներն են համարվում ախրոմատիկ.

- 1) սպիտակից սև մոխրագույնի բոլոր երանգները
- 2) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները
- 3) կապույտի բոլոր երանգները
- 4) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները

18

Նշել երկրորդային գույների եռյակը.

- 1) կարմիր, դեղին, կապույտ
- 2) կանաչ, նարնջագույն, մանուշակագույն
- 3) կապույտ, կանաչ, մանուշակագույն
- 4) կարմիր, դեղին, նարնջագույն

19

Տրված գունային եռյակներից ընտրեք սառը գույների խումբը.

- 1) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 2) կարմիր, նարնջագույն, դեղին
- 3) սև, մոխրագույն, սպիտակ
- 4) երկնագույն, կապույտ, մանուշակագույն

20

Ընտրեք նախադասության ճիշտ շարունակությունը «Կարմիրը, դեղինն ու նարնջագույնը...»

- 1) տաք գույներ են
- 2) սառը գույներ են
- 3) ախրոմատիկ գույներ են
- 4) հիմնական գույներ են

21

Ո՞ր ժամանակաշրջանով է թվագրվում քարանձավային նկարչության սկզբնավորումը Եվրոպայում.

- 1) նեոլիթ
- 2) էնեոլիթ
- 3) պալեոլիթ
- 4) մեզոլիթ

22

Ո՞րն է ճարտարապետական կառույց հին Եգիպտոսում.

- 1) զիկկուրատ
- 2) մաստաբա
- 3) բիր-հիլանի
- 4) օդեոն

23

Մեզալիթյան կառույց է հանդիսանում՝

- 1) մեգարոնը
- 2) ագորան
- 3) կրոմլեխը
- 4) դիպիլոնը

24

Վիշապաքարի ո՞ր տեսակն է ներկայացված լուսանկարում.



- 1) ձկնակերպ
- 2) ցլաձկնակերպ
- 3) ցլակերպ
- 4) վիշապակերպ

25

Կերպարվեստի ի՞նչ տեսակ են իրենցից ներկայացնում Հայկական լեռնաշխարհի հայտնի ժայռապատկերները.

- 1) մանրաքանդակ
- 2) փորագրաքանդակ
- 3) բարձրաքանդակ
- 4) հաստոցային քանդակ

26

Ո՞րտեղ է գտնվում որմնանկարներով հարուստ Ալտամիրայի քարանձավը.

- 1) Մեքսիկա
- 2) Իտալիա
- 3) Իսպանիա
- 4) Արգենտինա

27

Հին եգիպտական ո՞ր հայտնի հուշարձանն է պատկերված լուսանկարում.



- 1) Ամենհոթեփ 3-րդ փարավոնի դամբարանային համալիրը
- 2) Ռամզես 2-րդ փարավոնի ժայռափոր տաճարը
- 3) Խաչեփսուֆ կին-փարավոնի տաճարային համալիրը
- 4) Արքաների հովիտում դամբարանային համալիր

28

Մ. թ. ա. 22-21-րդ դդ. թվագրվող արծաթե դրվագագարդ գավաթը հայտնաբերվել է՝



- 1) Լոռի-բերդում
- 2) Քարաշամբում
- 3) Պատավաքարում
- 4) Շենգավիթում

29

Վանի թագավորության գերագույն Խալդի աստվածության գլխավոր տաճարը գտնվել է՝

- 1) Էրերունիում
- 2) Թեյշեբահինիում
- 3) Սուծածիրում
- 4) Արգիշթիխինիլիում


30

Բաբելոնից հայտնի հուշարձան է.

- 1) Մարդուկ աստծոն նվիրված դարպասները
- 2) Իշթարի դարպասները
- 3) Առյուծների դարպասները
- 4) Դիպիլոնյան դարպասները

31

Հնագիտական տվյալների համաձայն ո՞ւմ է պատկերում բրոնզե արձանիկը.



- 1) Խալդի աստվածությանը
- 2) Թեյշեբա աստվածությանը
- 3) Ուա աստվածությանը
- 4) Շիվինի աստվածությանը

32

Հին Հունաստանի <<Դիսկոբոլ>> (սկավառականետորդ) քանդակի հեղինակն է՝

- 1) Պոլիկլետեսը
- 2) Միրոնը
- 3) Ֆիդիասը
- 4) Պրաքսիտելեսը

33

Աքեմենյան ժամանակաշրջանին վերագրվող հեծյալի կերպարով արձայա եղջրագավաթ (պոսյակ) Հայաստանում հայտնաբերվել է՝

- 1) Էրեբունիում
- 2) Վանաձորում
- 3) Շենգավիթում
- 4) Լճաշենում

34

Հունա-հռոմեական տաճարի ո՞ր տիպին է պատկանում Գառնիի հեթանոսական տաճարը.

- 1) թուլոս
- 2) դիպտերոս
- 3) պերիպտերոս
- 4) ցելլա

35

Գառնիի բաղնիքի խճանկարը կատարված է՝

- 1) գունախճիկով (սմալտա)
- 2) գետաքարերով
- 3) խեցու բեկորներով
- 4) բիտումով

36

Կարիատիդների պորտիկը Աթենքի Ակրոպոլիսում գտնվող ո՞ր տաճարի բաղկացուցիչ մաս է կազմում.

- 1) Պարթենոն
- 2) Էրեքթեոն
- 3) Պրոպիլեոն
- 4) Նիկե Ապտերոս

37

Վաղ քրիստոնեական եռանավ բազիլիկ կառույց է՝

- 1) Սբ. Հռիփսիմե եկեղեցին
- 2) Երեբոյքի (տաճար) եկեղեցին
- 3) Աշտարակի Կարմրավոր եկեղեցին
- 4) Սուրբ Ստեփանոս (Լմբատավանք) եկեղեցին

38

Կենտրոնագմբեթ ճարտարապետության օրինակ է՝

- 1) Զվարթնոցի տաճարը
- 2) Ծիծեռնավանքը
- 3) Երեբոյքի տաճարը
- 4) Սուրբ Գայանե եկեղեցին

39

Գետնախարսիսի վրա տեղադրված մույթագարդ վաղքրիստոնեական հուշարձանի օրինակ է՝

- 1) Օձունի կոթողը
- 2) Տաթևի սյունը
- 3) Հաղպատի վանական համալիրի խաչքարը
- 4) Դսեղի քառակող կոթողը

40

Աստվածամոր տարածված պատկերատիպ քրիստոնեական սրբանկարչության ասպարեզում.

- 1) <<Էմանուիլ>>
- 2) <<Պանտոկրատոր>>
- 3) <<Մանդիլիոն>>
- 4) <<Օղիգիտրիա>>

41

Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրին, Թեոդորա կայսրուհուն և նրանց շքախումբը պատկերող խճապատկերային հորինվածքները գտնվում են՝

- 1) Կոստանդնուպոլսի Սուրբ Իրինա եկեղեցում
- 2) Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցում
- 3) Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա եկեղեցում
- 4) Կիլիկիայի Ակների վանքում

42

Ո՞ր եկեղեցին է հարդարում այս պատկերաքանդակը.



- 1) Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին
- 2) Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին
- 3) Էջմիածնի Մայր տաճարը
- 4) Գեղարդավանքը

43

Ի՞նչպիսի խաչքար գոյություն չունի.

- 1) ամենափրկիչ
- 2) որմնափակ
- 3) բազմաբսիդ
- 4) քիվավոր

44

Նշվածներից ո՞րն է գորթական տաճար.

- 1) Քյոլնի տաճարը
- 2) Ֆլորենցիայի Սանտա Մարիա Դել Ֆիորե մայր տաճարը
- 3) Լեսսայի վանական համալիրը
- 4) Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարը

45

Ո՞ր հայտնի ձեռագրից է մանրանկարը.



- 1) Վասակ իշխանի Ավետարան
- 2) Թարգմանչաց Ավետարան
- 3) Մուղնու Ավետարան
- 4) Էջմիածնի Ավետարան


46

Մումիկի պատկերագրողած ձեռագրերից է՝

- 1) Պատերազմի Ավետարանը
- 2) Բուրթել իշխանի Ավետարանը
- 3) Վասակ իշխանի Ավետարանը
- 4) Հաղպատի Ավետարանը

47

Հայոց ո՞ր արքան է ներկայացված այս կտիտորական քանդակում.



- 1) Գագիկ Ա Բագրատունին
- 2) Գագիկ Արծրունին
- 3) Աշոտ Ողորմած-ը
- 4) Տրդատ 3-րդ-ը

48

Ո՞վ է Պաղոսյան գտնվող զորահրամանատար Գատամելատի ձիարձանի հեղինակը.

- 1) Անդրեա Վեռոքքինո
- 2) Դոնաթելլո
- 3) Միքելանջելո Բուանարոտտին
- 4) Բենվենուտո Չելլինին

49

Ո՞վ է Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարի հրապարակային պուրնաշարի հեղինակը.



- 1) Լորենցո Բեռնինին
- 2) Ֆռանչեսկո Բոռոմինին
- 3) Կառլո Մադեռնան
- 4) Դոնատո Բրամանտեն

50

Ու՞մ վրձնին է վերագրվում որմնանկարը.



- 1) Հակոբ Հովնաթանյան
- 2) Գևորգ Բաշինջաղյան
- 3) Նաղաշ Հովնաթանյան
- 4) Ստեփանոս Ներսիսյան

51

Հակոբ Հովնաթանյանի ո՞ր ստեղծագործությունն է հետմահու կատարված դիմանկար.

- 1) Նատայա Թեումյանի դիմանկարը
- 2) Շուշանիկ Նադիրյանի դիմանկարը
- 3) Եկատերինա Գուրգենբեկովայի դիմանկարը
- 4) Գրիգոր Թումանյանի դիմանկարը

52

Նշվածներից ո՞վ է իմպրեսիոնիստ նկարիչ.

- 1) Կամիլ Պիսսարոն
- 2) Ժակ Լուի Դավիդը
- 3) Գյուստավ Կուրբեն
- 4) Ժան Ֆրանսուա Միլլեն

53

Նշել Հովհաննես Այվազովսկու վերջին անավարտ կտավը.

- 1) <<Ծովածոց>>
- 2) <<Թուրքական նավի պայթյունը>>
- 3) <<Քառս>>
- 4) <<Դարյալի կիրճը>>

54

Ո՞ր թվականին է Պաբլո Պիկասոն վրձնել <<Ավինյոնի աղջիկները>> կտավը՝ հիմք դնելով կուբիզմի սկզբնավորմանը.



- 1) 1905 թ.
- 2) 1907 թ.
- 3) 1906 թ.
- 4) 1904 թ.

55

20-րդ դարի հայ քանդակագործներից ո՞վ է հաճախել Օգյուստ Ռոդենի արվեստանոց.

- 1) Երվանդ Քոչարը
- 2) Հակոբ Գյուրջյանը
- 3) Արա Սարգսյանը
- 4) Այծենիկ Ուրարտուն

56

Նշվածներից ո՞վ է փոփ-արթ ուղղության ներկայացուցիչ.

- 1) Ռենե Մազրիտ
- 2) Էնդի Ուորհոլ
- 3) Անրի Մատիս
- 4) Բերթա Մորիզո

57

Նշել քանդակագործ Արտաշես Հովսեփյանի ստեղծագործությունը.

- 1) Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը Երևանում
- 2) Ստեփան Շահումյանի հուշարձանը Երևանում
- 3) Կոմիտասի մահարձանը Երևանում
- 4) Սայաթ-Նովա հուշաղբյուրը Երևանում

58

Ո՞վ է նկարագարդման հեղինակը.



- 1) Գրիգոր Խանջյանը
- 2) Մարտիրոս Սարյանը
- 3) Էդուարդ Իսաբեկյանը
- 4) Հակոբ Կոջոյանը

59

Ո՞ր գեղարվեստական ուղղությանն է պատկանում Անրի Մատիսի «Կարմիր սենյակ» ստեղծագործությունը.

- 1) էքսպրեսիոնիզմ
- 2) իմպրեսիոնիզմ
- 3) ֆովիզմ
- 4) պուանտիլիզմ

60

Ի՞նչպես է կոչվում Հակոբ Կոջոյանի կտավը.



- 1) «Փողոց Թավրիզում»
- 2) «Փողոց Կոստանդնուպոլսում»
- 3) «Պարսկական շուկա»
- 4) «Պարսկական ճաշարան»